ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էին՝ Վաղարշակ Ամիրխանյանը, Անահիտ Առաքելյանը, Լենդրուշ Արշակյանը, Անահիտ Հակոբյանը, Արթուր Մուրադյանը, Անահիտ Ստեփանյանը, Պետրոս Ստեփանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին բնակավայրերի վարչական ղեկավարներ Արտաշես Ղարիբյանը, Սևակ Գաբրիելյանը, Արտակ Թովմասյանը, Բաղդասար Թովմասյանը, Անդրանիկ Մեջլումյանը, Զոհրակ Հովհաննիսյանը, Վարդան Հակոբյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Սիրանուշ Նիկողոսյանը, առևտրի, տրանսպորտի, սպասարկման և գովազդի բաժնի պետ Միեր Պապյանը, զարգացման ծրագրերի և զբոսաշրջության բաժնի պետ Հայկ Սարգսյանը, քաղաքաշինության բաժնի պետ Բաբկեն Բեգլարյանը, բնապահպանության, գյուղատնտեսության և հողաշինության բաժնի պետ Արազ Հակոբյանը, կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի և սոցիալական հարցերի բաժնի գլխավոր մասնագետ Նունե Նադիրյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Նորայր Սարգսյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Հասմիկ Զաքարյանը:

1.Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 27-ի երկրորդ նստաշրջանի հերթական նիստի օրակարգը.

1) Նաիրի համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին:

2) Նաիրի համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին:

3) Նաիրի համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին:

4) Նաիրի համայնքի մշակույթի տների կանոնադրությունները հաստատելու մասին:

5)<<Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման (ՀՏԶՀ)>> ծրագրի անդամակցության հայտին հավանություն տալու մասին:

6) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին:

7) Հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

8) Մինչև 20 քմ մակերեսով կառուցապատման իրավունքով տարածքների տրամադրման պայմանները սահմանելու մասին:

9) Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի գլխավոր հատակագծի նախագծման առաջադրանքին համաձայնություն տալու մասին:

10) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

11) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 175-Ա/

2.Լսեցին

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետը՝ Նաիրի համայնք ավագանին որոշում է.

1. Սահմանել Նաիրի համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 176-Ա/

3.Լսեցին

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՆԴՈՐՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 40.1-րդ կետի, Նաիրի համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Նաիրի համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու համար սահմանել ժամը 23.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը:

2. Սույն որոշման իմաստով՝ առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրը խախտող գործողությունները հասկացվում են ցանկացած գործողություն, որը աղմուկ է առաջացնում և խանգարում է քաղաքացիների լիակատար հանգստությունը, ներառյալ անձնական գործողությունները, մեխանիկական միջոցների և տեխնիկական միջոցների գործողությունները, այդ թվում՝ հրատեխնիկական արտադրանքի, ներառյալ հրավառության օգտագործումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-2 Ձեռնպահ-1

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 177-Ա/

4.Լսեցին

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետի և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.3-րդ հոդվածի, Նաիրի համայնքի ավագանին **որոշում է.**

1. Նաիրի համայնքի տարածքում արգելվում է սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, բաղնիք, շոգեբաղնիք, սաունա, մերսման սրահ) տեղակայումը բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքում, կրթական և պատմամշակութային հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի, բժշկական հաստատությունների տարածքներում:

2. Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները Նաիրի համայնքի տարածքում կարող են գտնվել կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, բազմաբնակարան շենքերից, անհատական բնակելի տներից, հանրային սննդի օբյեկտներից, հյուրանոցներից, պետական կառավարման և

տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից նվազագույնը 50 մետր հեռավորության վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 178-Ա/

5.Լսեցին

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել <<Եղվարդի մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 1-ի:

2.Հաստատել <<Զովունիի մշակութային կենտրոն>> ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 2-ի:

3.Հաստատել Պռոշյանի <<Կարոտ Մկրտչյան>> մշակույթի կենտրոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 3-ի:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 179-Ա/

6.Լսեցին

<<ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ (ՀՏԶՀ)>> ԾՐԱԳՐԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ հավանություն <<Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման (ՀՏԶՀ)>> ծրագրի անդամակցության հայտին և ծրագրին մասնակցելու համար դիմել Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) Հայաստանյան գրասենյակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 180-Ա/

7.Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԻՐԱՆՈՒՇ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Աշոտ Ավագյանի 2022 թվականի օգոստոսի 5-ի N Եվ 3078 գրությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը քաղաք Եղվարդ, Երևանյան 1 հասցեում գտվող, համայնքային սեփականություն հանդիսացող վարչական շենքի 3-րդ հարկի N 24(16,6 քմ), 25(17,7քմ), 26(16,1քմ), 3(13,0քմ) և 4(23,4քմ) սենյակները վարձակալության իրավունքով, 5 տարի ժամկետով՝ որպես գրասենյակ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը տրամադրելու վերաբերյալ:

2. Սահմանել տարածքի վարձակալության արժեք 1 քմ-ի համար 1200 դրամ, ամսական վճարը՝ 104160 դրամ:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության հետ կնքել տարածքի վարձակալության մասին պայմանագիր:

4. ՈՒժը կորցրած ճանաչել Նաիրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 29-ի <<Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին>> N 135-Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 181-Ա/

8.Լսեցին

ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Բուժական գյուղում գտնվող կիսակառույց ճամբարը հյուրանոցի վերակառուցելու

նպատակով Նաիրի համայնք, գյուղ Բուժական, 1-ին փողոց, 5-րդ փակուղի, 12 հասցեում գտնվող, վարձակալության իրավունքով Ասյա Հենրիխի Գևորգյանին պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26092022-07-0010) 07-020-0101-0023 կադաստրային ծածկագրի 0.7 հա հողամասն ուղղակի վաճառքով օտարել նրան հողի կադաստրային արժեքով՝13143900 (տասներեք միլիոն մեկ հարյուր քառասուներեք հազար ինը հարյուր) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 182-Ա/

9.Լսեցին

ՄԻՆՉԵՎ 20 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2. կետի ա) ենթակետի ՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

Համայնքի ղեկավարի առաջարկության համաձայն սահմանել Նաիրի համայնքում ավտոտնակների, կրպակների, առևտրի և սպասարկման այլ օբյեկտների համար մինչև 20 քմ մակերեսով կառուցապատման իրավունքով տարածքներ տրամադրելու հետևյալ պայմանները՝ 1 քմ տարածքի վարձավճարի չափ՝ ամսական 100 դրամ:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 183-Ա

10.Լսեցին

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՎՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/Ա-8 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Նաիրի համայնքի Զովունի բնակավայրի գլխավոր հատակագծի նախագծման առաջադրանքին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-19 Դեմ-0 Զեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 184-Ա/

11.Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-176 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Պռոշյան գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Աշոտ Ստեփանի Ավետյանին պատկանող 07-053-0322-0117 կադաստրային ծածկագրի 0.1199 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրե լ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Պռոշյան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 42-Ն որոշմամբ հաստատված Պռոշյան բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-19 Դեմ-0 Զեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 185-Ա/

11.Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 49-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների

/բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 1/փ-175 դրական եզրակացությունը՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Պռոշյան գյուղում գտնվող, սեփականության իրավունքով Բորիս Լևոնի Պռազյանին պատկանող 07-053-0322-0118 կադաստրային ծածկագրի 0.1199 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի կատեգորիա:

2.Հայաստանի Հանրապետության Պռոշյան համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 22-ի N 42-Ն որոշմամբ հաստատված Պռոշյան բնակավայրի գլխավոր հատակագծի մեջ կատարել համապատասխան փոփոխություն:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 186-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՇՈՏ ԱԶԻԶՅԱՆ

ՆԱՐԵԿ ԱՆՏՈՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆՆՄԱՆ ԲԱԲԱՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՌԱՖԻԿ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ԽԱՉԻԿ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԳՈՌ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԼԻԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՍՐՈՎ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՍՈՖԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

Ինչպես արձանագրեց՝ Հասմիկ Զաքարյանը _____

Հավելված

Նաիրի համայնքի ավագանու

2022 թվականի սեպտեմբերի 27-ի

N 176-Ա որոշման

ԿԱՐԳ

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Նաիրի համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման հետ կապված հարաբերությունները:

2. Նաիրիի համայնքապետարանի աշխատակազմը պարտավոր է պահել Նաիրի համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման միասնական էլեկտրոնային մատյան՝ (այսուհետ՝ մատյան) համաձայն Ձև 1-ի:

3. Մատյանում ըստ հերթականության լրացվում են՝

1) նորմատիվ իրավական ակտի հաշվառման հերթական համարը.
2) նորմատիվ իրավական ակտն ընդունող մարմինը.
3) նորմատիվ իրավական ակտի տեսակը.
4) նորմատիվ իրավական ակտի վերնագիրը.
5) նորմատիվ իրավական ակտի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.
6) նորմատիվ իրավական ակտի հերթական համարը.
7) նորմատիվ իրավական ակտի ստորագրման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.
8) նորմատիվ իրավական ակտի հրապարակման, դրա ուժի մեջ մտնելու տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը.
9) նորմատիվ իրավական ակտի գործողության դադարեցման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը:
10) նորմատիվ իրավական ակտի նախագիծը պետական-իրավական փորձաքննության ուղարկելու տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը,

11) նորմատիվ իրավական ակտի նախագծի մասին պետական-իրավական փորձագիտական եզրակացություն տալու տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, իսկ օրենքով սահմանված ժամկետներում փորձագիտական եզրակացություն չտրամադրելու դեպքում՝ նշում այդ մասին:

4. Մատյաններում կարող են նախատեսվել նաև այլ նշումներ:

5. Մատյանի հաշվառման համարների հերթականությունը վերսկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից:

6. Մատյանում նշումները պետք է կատարվեն առանց կրճատումների:

7. Նաիրի համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը հաշվառվում, այնուհետև սահմանված կարգով արխիվացվում և պահպանվում են համայնքի աշխատակազմի արխիվում, իսկ սահմանված ժամկետների ավարտից հետո մշտական պահպանության է հանձնվում պետական կամ համայնքային արխիվ:

8. Սույն կարգը տարածվում է նաև Նաիրի համայնքի ավագանու կողմից ընդունված ընդունված անհատական իրավական ակտերի հաշվառման և պահպանման վրա:

9. Նաիրի համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման մատյանից տեղեկություններ կարող են տրամադրվել իրավաբանական և ֆիզիկական անձանց: Մատյանից գրավոր տեղեկություններ կարող են տրվել առձեռն, փոստով, ինչպես նաև էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

Հավելված N 1
Նաիրի համայնքի ավագանու
2022 թվականի սեպտեմբերի 27-ի 179-Ա որոշման

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Եղվարդի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Նաիրի համայնքի անունից՝ համայնքի ավագանու որոշմամբ: Կազմակերպությունը ստեղծվել է առանց ժամկետային սահմանափակման:

1.2 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3 Հիմնադրի և կազմակերպության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ: Նաիրի համայնքի անունից կազմակերպության կառավարումն իրականացնող մարմին հանդիսանում է Նաիրի համայնքի ղեկավարը:

1.4 Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել գույք, իրականացնել գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.6 Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.7 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվամբ կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

1.8 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.9 Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում մինչև կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

1.10 Կազմակերպության անվանումն է՝

- հայերեն – «Եղվարդի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
- ռուսերեն –"Егвардский дом культуры" общинная некоммерческая организация
- անգլերեն – "Yeghvard Culture House" Municipal non-commercial organisation

1.11 Կազմակերպության հասցեն է՝ Նաիրի համայնք, քաղաք Եղվարդ, Սաֆարյան փողոց, N 140:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպությունը ստեղծվում է մշակութային գործունեություն և կրթություն իրականացնելու նպատակով: «Եղվարդի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի նպատակներն են՝

- ապահովել պետական մշակութային քաղաքականության իրականացումը,
- իրականացնել հումանիտար, գեղարվեստական և սպորտային տարբեր մարզաձևերի մասնագիտականկրթություն,
- իրականացնել ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, նախապատրաստում օժտված և տաղանդավոր երեխաներին՝ համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար,
- մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցում,
- բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և ազգային արհեստների ուսուցողական ծրագրերի իրականացում:

2.2 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- համերգային գործունեություն,
- հրատարակչական գործունեություն:

2.3 Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար կազմակերպությունն իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:

2.4 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

2.5 Կազմակերպության կողմից ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

2.6 Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները կատարում է շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

2.7 Կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը և կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը:

3.2 Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- կազմակերպության հիմնադրումը,
- կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

- կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը:

3.3 Հիմնադիրը

ա) իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար,

բ) հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմը,

գ) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և կանոնադրության փոփոխությունները,

դ) սահմանում է կազմակերպության կառավարման համակարգը,

ե) նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը,

զ) իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

է) կասեցնում, կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

ը) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

թ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանը ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

ժ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, իր որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման և ձեռք բերման կամ վարձակալության հանձնման համար,

ի) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

լ) հաստատում է կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը,

խ) իրականացնում է օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

3.4 Կազմակերպության գործադիր մարմինը.

3.4.1 Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը: Կազմակերպության տնօրենը, օրենքով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրամի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

3.4.2 Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը համայնքի անունից ստորագրում է Նաիրի համայնքի ղեկավարը:

3.4.3 Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվող անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:

3.4.4 Կազմակերպության տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

3.4.5 Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը պատժառված վնասի համար:

3.4.6 Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվող անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի՝ ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.5 Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

գ) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում (աշխատանքային պայմանագրի համաձայն) կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
ե) բանկում բացում է հաշվարկային հաշիվներ,
զ) կատարում է աշխատանքի բաշխում տեղակալների միջև,
է) սահմանում է կազմակերպության կանոնադրության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների սհմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումները,
ը) ապահովում է կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում հիմնադրին,

թ) իրականացնում է օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռքբերված գույքից:

4.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադր իորոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

4.3 Հիմնադիրը սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

4.4Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

4.5 Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

4.6 Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

4.7 Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

4. 8Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

4.9Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

4. 10 Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

4. 11 Կազմակերպության ուսումնաօժանդակ անձնակազմի և վարչատնտեսական աշխատողների թվաքանակը սահմանվում է նախահաշվով հաստատված աշխատավարձի ֆոնդի շրջանակներում:

4. 12 Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հիմնադիրը:

4.13 Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) հիմնադրի կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթը օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1 Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված N 2
Նաիրի համայնքի ավագանու
2022 թվականի սեպտեմբերի 27-ի N 179-Ա որոշման

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Զովունիի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Նաիրի համայնքի անունից՝ համայնքի ավագանու որոշմամբ: Կազմակերպությունը ստեղծվել է առանց ժամկետային սահմանափակման:

1.2 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին»,«Կրթության մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3 Հիմնադրի և կազմակերպության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ: Նաիրի համայնքի անունից կազմակերպության կառավարումն իրականացնող մարմին հանդիսանում է Նաիրի համայնքի ղեկավարը:

1.4 Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել գույք, իրականացնել գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.6 Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.7 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվամբ կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

1.8 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.9 Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում մինչև կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

1.10 Կազմակերպության անվանումն է՝

- հայերեն – «Զովունիի մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
- ռուսերեն –"Зовунийский культурный центр" общинная некоммерческая организация
- անգլերեն – "Zovouni Cultural Centre" Municipal non-commercial organisation

1.11 Կազմակերպության հասցեն է՝ Նաիրի համայնք, գյուղ Զովունի, 39 փողոց, 131 շենք:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպությունը ստեղծվում է մշակութային գործունեություն և կրթություն իրականացնելու նպատակով: «Եղվարդի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի նպատակներն են՝

- ապահովել պետական մշակութային քաղաքականության իրականացումը,
- իրականացնել հումանիտար, գեղարվեստական և սպորտային տարբեր մարզաձևերի մասնագիտականկրթություն,
- իրականացնել ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, նախապատրաստում օժտված և տաղանդավոր երեխաներին՝ համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար,
- մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցում,
- բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և ազգային արհեստների ուսուցողական ծրագրերի իրականացում:

2.2 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- համերգային գործունեություն,
- հրատարակչական գործունեություն:

2.3 Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար կազմակերպությունն իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:

2.4 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

2.5 Կազմակերպության կողմից ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է «Գնումների մասիրն» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

2.6 Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները կատարում է շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

2.7 Կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը և կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը:

3.2 Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- կազմակերպության հիմնադրումը,

- կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
- կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը:

3.3 Հիմնադիրը

ա)իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունըև պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար,

բ) հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմը,

գ) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և կանոնադրության փոփոխությունները,

դ) սահմանում է կազմակերպության կառավարման համակարգը,

ե) նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը,

զ) իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

է) կասեցնում, կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

ը) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

թ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանը ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

ժ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, իր որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման և ձեռք բերման կամ վարձակալության հանձնման համար,

ի) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

լ) հաստատում է կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը,

խ) իրականացնում է օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

3.4 Կազմակերպության գործադիր մարմինը.

3.4.1 Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը: Կազմակերպության տնօրենը, օրենքով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրամի որոշումների, սույն

կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

3.4.2 Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը համայնքի անունից ստորագրում է Նաիրի համայնքի ղեկավարը:

3.4.3 Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվող անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:

3.4.4 Կազմակերպության տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

3.4.5 Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը պատժառված վնասի համար:

3.4.6 Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվող անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի՝ ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.5 Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

գ) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում (աշխատանքային պայմանագրի համաձայն) կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

ե) բանկում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) կատարում է աշխատանքի բաշխում տեղակալների միջև,

է) սահմանում է կազմակերպության կանոնադրության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների սհմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումները,

ը) ապահովում է կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում հիմնադրին,

թ) իրականացնում է օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռքբերված գույքից:

4.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադր իորոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

4.3 Հիմնադիրը սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

4.4 Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

4.5 Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

4.6 Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

4.7 Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

4. 8 Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

4.9 Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

4. 10 Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

4. 11 Կազմակերպության ուսումնաօժանդակ անձնակազմի և վարչատնտեսական աշխատողների թվաքանակը սահմանվում է նախահաշվով հաստատված աշխատավարձի ֆոնդի շրջանակներում:

4. 12 Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հիմնադիրը:

4.13 Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) հիմնադրի կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթը օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1 Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված N 3
Նաիրի համայնքի ավագանու
2022 թվականի սեպտեմբերի 27-ի N 179-Ա որոշման

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Կարոտ Մկրտչյան» մշակույթի կենտրոն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Նաիրի համայնքի անունից՝ համայնքի ավագանու որոշմամբ: Կազմակերպությունը ստեղծվել է առանց ժամկետային սահմանափակման:

1.2 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին»,«Կրթության մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3 Հիմնադրի և կազմակերպության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ: Նաիրի համայնքի անունից կազմակերպության կառավարումն իրականացնող մարմին հանդիսանում է Նաիրի համայնքի ղեկավարը:

1.4 Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել գույք, իրականացնել գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.6 Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.7 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվամբ կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

1.8 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.9 Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում մինչև կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

1.10 Կազմակերպության անվանումն է՝

- հայերեն – «Կարոտ Մկրտչյան» մշակույթի կենտրոն համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
- ռուսերեն – Культурный центр "Карот Мкртчян" общинная некоммерческая организация
- անգլերեն – "KarotMkrtchyan" Cultural Centre Municipal non-commercial organisation

1.11 Կազմակերպության հասցեն է՝ Նաիրի համայնք, գ. Պռոշյան, Անդրանիկի 18:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպությունը ստեղծվում է մշակութային գործունեություն և կրթություն իրականացնելու նպատակով: «Եղվարդի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի նպատակներն են՝

- ապահովել պետական մշակութային քաղաքականության իրականացումը,
- իրականացնել հումանիտար, գեղարվեստական և սպորտային տարբեր մարզաձևերի մասնագիտական կրթություն,
- իրականացնել ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, նախապատրաստում օժտված և տաղանդավոր երեխաներին՝ համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար,
- մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցում,
- բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և ազգային արհեստների ուսուցողական ծրագրերի իրականացում:

2.2 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- համերգային գործունեություն,
- հրատարակչական գործունեություն:

2.3 Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար կազմակերպությունն իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:

2.4 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

2. 5 Կազմակերպության կողմից ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է «Գնումների մասիրն» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:
2. 6 Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները կատարում է շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:
2. 7 Կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3. 1 Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը և կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը:
3. 2 Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- կազմակերպության հիմնադրումը,
- կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
- կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը:

3. 3 Հիմնադիրը
ա) իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար,
բ) հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմը,

գ) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և կանոնադրության փոփոխությունները,

դ) սահմանում է կազմակերպության կառավարման համակարգը,

ե) նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը,

զ) իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

է) կասեցնում, կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

ը) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

թ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանը ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

ժ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, իր որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման և ձեռք բերման կամ վարձակալության հանձնման համար,

ի) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

լ) հաստատում է կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը,

խ) իրականացնում է օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

3.4 Կազմակերպության գործադիր մարմինը.

3.4.1 Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը: Կազմակերպության տնօրենը, օրենքով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրամի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

3.4.2 Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը համայնքի անունից ստորագրում է Նաիրի համայնքի ղեկավարը:

3.4.3 Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվող անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:

3.4.4 Կազմակերպության տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

3.4.5 Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը պատժառված վնասի համար:

3.4.6 Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվող անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի՝ ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները,

հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.5 Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

գ) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում (աշխատանքային պայմանագրի համաձայն) կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
ե) բանկում բացում է հաշվարկային հաշիվներ,
զ) կատարում է աշխատանքի բաշխում տեղակալների միջև,
է) սահմանում է կազմակերպության կանոնադրության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների սհմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումները,
ը) ապահովում է կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում հիմնադրին,

թ) իրականացնում է օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռքբերված գույքից:

4.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադր իորոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

4.3 Հիմնադիրը սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

4.4 Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

4.5 Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

4.6 Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

4.7 Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

4. 8 Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

4.9 Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

4. 10 Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

4. 11 Կազմակերպության ուսումնաօժանդակ անձնակազմի և վարչատնտեսական աշխատողների թվաքանակը սահմանվում է նախահաշվով հաստատված աշխատավարձի ֆոնդի շրջանակներում:

4. 12 Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հիմնադիրը:

4. 13 Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) հիմնադրի կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5. 1 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթը օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6. 1 Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: